Կարգապահական գործ թիվ ԿԳ-23028

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՓԱՍՏԱԲԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԵՐԳԵՅԻ ԿՈՉՈՒԲԱԵՎԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վահե Աստվածատրյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Արաքս Վարդանյանի և Հայկ Սահակյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Ալեքսանդր Սերգեյի Կոչուբաևի,

քննության առնելով փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 2606), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Արաքսյա Իշխանյանը **(այսուհետ՝ նաև Դիմող),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ նաև Պալատ),** հայտնել է, որ 14.03.2022թ.-ին կնքել է փաստաբանական ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր **(այսուհետ՝ նաև Պայմանագիր**) «Կոնտրա Լեգեմ փաստաբանական բյուրո» ՍՊԸ-ի հետ, ի դեմս բյուրոյի նախագահ փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևի հետ: Նշված պայմանագրով սահմանված 1.200.000 ՀՀ դրամ գումարը Դիմողը վճարել է պայմանագրով սահմանված կարգով: Ըստ պայմանագրի, կատարողը պարտավորվել է պատվիրատուին պաշտպանել իր վերաբերյալ քննվող քրեական գործով նախաքննության և դատաքննության փուլերում:

Դիմողը նշել է, որ «Կոնտրա Լեգեմ փաստաբանական բյուրո» ՍՊԸ-ի փաստաբաններին լիազորել է նաև մասնակցել ԵԴ/8026/02/21 քաղաքացիական գործի քննությանը և ըստ բանավոր պայմանավորվածության, վճարված գումարի մեջ մտնում էր

նաև այդ քաղաքացիական գործի դատական ներկայացուցչությունը, որը պայմանագրում նշված չի եղել:

Ըստ Դիմողի՝ փաստաբանը խախտել է իրենց միջև կնքված պայմանագրի կետերը, չի կատարել իր պարտականությունները և հրաժարվում է վերադարձնել գումարը: Մասնավորապես, կնքված պայմանագրի շրջանակներում ընդամենը մեկ անգամ իր հետ գնացել է քննիչի մոտ, միջնորդություն է գրել վերջինիս, որը մերժվել է: Ավելին, Դիմողի պնդմամբ Փաստաբանը բարեխիղճ իրավաբանական ծառայություններ չի մատուցել չի մասնակցել ԵԴ/8026/02/21 քաղաքացիական գործով 13.04.2023թ. դատական նիստին, չի գրել և ներկայացրել դատարան առարկություն, չի պատասխանել իր զանգերին:

Դիմողը հավելել է, որ ինքը մինչև նախաքննության ավարտը 16.05.2023թ. Կոնտրա Լեգեմ փաստաբանական բյուրոյի ՍՊԸ-ին, ի դեմս նախագահ Ալեքսանդր Կոչուբաևի, ներկայացրել է դիմում առ այն, որ լուծում է նրանց միջև 14.03.2022թ. կնքված պայմանգիրը և հրաժարվում է ծառայություններից՝ առաջարկելով ծառայությունների մատուցման համար վճարված գումարից որպես կատարված աշխատանքի գումար պահել 150.000 ՀՀ դրամը, իսկ մնացած 1.050.000 ՀՀ դրամը վերադարձնել իրեն:

Ի պատասխան նշված դիմումի Փաստաբանը առարկել է գումարի վերադարձման առնչությամբ՝ հայտնելով, որ իրենց կողմից Դիմողին դեռևս 11.05.2023թ. տեղեկացվել է քրեական գործի կարճման մասին:

Դիմողը նշել է նաև, որ փաստաբան Ա. Կոչուբաևի կամ գրասենյակի այլ փաստաբանների կողմից մայիսի 11-ին իրեն չէին կարող տեղեկացնել այն բանի մասին, որ իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է, քանի որ քննիչը որոշումը կայացրել է 23.05.2023թ., երբ ինքն արդեն ուղարկած է եղել ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծելու մասին ծանուցումը:

Դիմողի պնդմամբ, Փաստաբանը նաև կատարել է հայտարարություններ իր մեղավորության ապացուցված լինելու վերաբերյալ, երբ ինքը ժխտել և ժխտում է դա:

Նշվածի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 17.08.2023 թվականին Դիմողին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողը որևէ դիրքորոշում կամ ապացույց չի ներկայացրել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Արաքսյա Իշխանյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 24.07.2023թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ Դիմողի և իր միջև կնքված պայմանագրի համաձայն՝ Փաստաբանը պետք է պաշտպաներ Դիմողին նրա վերաբերյալ քննվող վաշխառության հանցակազմի քրեական գործով նախաքննության և դատաքննության փուլերում:

Փաստաբանը նշել է, որ *Դիմողի հայտարարությունն առ այն, որ ինքը հանձնարարության ընթացքի մասին կանոնավորապես չի տեղեկացրել Դիմողին, ինչպես նաև չի պատասխանել իրեն հետաքրքրող հարցերին իրականությանը չի համապատասխանում այն պատճառով, որ վերջինիս հայտնի է եղել ինչպես գրասենյակի տնօրենի, այնպես էլ գրասենյակի իրավաբանների հեռախոսահամարները և մշտապես պահպանել են միմյանց միջև կապը ինչպես հեռախոսազանգերի միջոցով, այնպես էլ գրասենյակ այցելելու միջոցով:* Անդրադառնալով գրասենյակում փաստաբանի հետ հանդիպման անհնարինության հարցին՝ Փաստաբանը հայտնել է, որ *դա նույնպես չի համապատասխանում իրականությանը, քանի որ եղել են օրեր, երբ առանց պայմանավորվածության Դիմողը եկել է գրասենյակ և փաստաբանին այնտեղ չի հանդիպել, փոխարենը զրուցել է ընկերության աշխատակիցների հետ և իրեն հուզող բոլոր հարցերի շուրջ ստացել է իրավաբանական խորհրդատվություն:*

Փաստաբանը հայտնել է, որ 10.05.2023թ. իրեն զանգահարել է Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչը՝ հայտնելով, որ Դիմողի վերաբերյալ հարուցված քրեական գործի վարույթը պետք է կարճվի, իսկ որոշումը պատրաստ լինելուն պես կհրավիրի քննչական բաժին: Նշվածի կապակցությամբ Փաստաբանը տեղեկացրել է Դիմողին, իսկ մայիսի 16-ին Դիմողը առձեռն ներկայացրել է դիմում պայմանագիրը լուծելու և գումարը վերադարձնելու մասին:

Փաստաբանը նաև նշել է, որ գործել է կնքված պայմանագրի շրջանակներում և ապահովել է իրեն տրված հանձնարարության կատարումը՝ հավելելով, որ պայմանագրի առարկայի մեջ ներառված չի եղել Դիմողի քաղաքացիական գործով որևէ գործողություն կատարելու պարտավորությունը: Փաստաբանի պնդմամբ, ինքը միայն մեկ անգամ ներկայացել է Դիմողի հետ հիշյալ քաղաքացիական գործով, սակայն այլ գործողություն կատարելու պարտավորություն չի ունեցել:

Փաստաբանը հերքել է Դիմողի պնդումն առ այն, որ ինքը կատարել է հայտարարություն վստահորդի մեղավորություն ապացուցված լինելու վերաբերյալ, երբ վերջինս ժխտում էր դա՝ հավելելով, որ Դիմողի կողմից ներկայացված պայմանագիրը լուծելու մասին դիմումում նկարագրված հանգամանքների վերաբերյալ հայտնել է իր առարկությունները՝ հաշվի առնելով, որ Դիմողի նկատմամբ հարուցված քրեական գործի նախաքննությունն ավարտվել է արարքն ապաքրեականացվելու հիմքով, այլ ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլ արդարացնող հիմքով:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 17.08.2023 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Փաստաբանը որևէ դիրքորոշում կամ ապացույց չի ներկայացրել:

Հանձնաժողովի նիստի ընթացքում, Փաստաբանն ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը, հավելելով, որ Դիմողի կողմից պայմանագրի լուծման հիմքում դրված հանգամանքը չի համապատասխանում իրականությանը, հաշվի առնելով, որ Դիմողը մշտապես կապի մեջ է եղել «Կոնտրա Լեգեմ փաստաբանական բյուրո» ՍՊԸ-ի

աշխատակիցների հետո ընդհուպ մինչև պայմանագիրը լուծելու մասին իր մտադրության մասին հայտնելու օրը:

Հանձնաժողովի նիստի ընթացքում, Փաստաբանը նշել է, որ Դիմողի կողմից ներկայացված ծանուցման հիմքում ընկած հանգամանքների վկայակոչումը ինքնին չէր կարող հիմք հանդիսանալ պայմանագիրը լուծելու համար, հաշվի առնելով, որ Դիմողը չէր ներկայացրել որոշակի հիմնավորում իր կողմից մեջբերված հանգամանքների վերաբերյալ:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 28.07.2023թ. թիվ 198-Ա/ԿԳ-23028 որոշմամբ փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ նաև Օրենք)** 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 3.8.4 (1) ենթակետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

04.08.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 04.10.2023թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել հետևյալ փաստերը.

16.05.2023թ. Դիմողը դիմում է հասցեագրել «Կոնտրա Լեգեմ փաստաբանական բյուրո» ՍՊԸ-ի նախագահ՝ Ալեքսանդր Կոչուբաևին և խնդրել իրենց միջև կնքված Պայմանագիրը լուծել համաձայն Պայմանագրի 2.4.3. կետի:

Թիվ 14174322 քրեական գործով վարույթը նախաքննության փուլում 23.05.2023թ. կարճված լինելու պայմաններում, Փաստաբանը փաստացի չի իրականացրել Դիմողի շահերի պաշտպանությունը դատաքննության փուլում, ինչով պայմանավորված ինչպես պայմանագրի 2.1.7, 2.4.3, 2.4.3.1 և 2.4.4 կետերի, այնպես էլ Կանոնագրքի 3.8.4 (1) ենթակետի կարգավորումներին համապատասխան ցանկացած դեպքում պետք է լուծվեր Փաստաբանի և Դիմողի միջև վերջնահաշվարկի հարցը՝ կատարվեր վճարում փաստացի կատարված աշխատանքի համար կամ վերադարձվեր վճարված գումարը այն աշխատանքի դիմաց, որը փաստացի չի կատարվել:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել 09.11.2023թ. ժամը 18:30-ին և 14.12.2023թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, սակայն կաշկանդված չլինելով դրանով, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. 14.03.2022թ. Արաքսյա Մուշեղի Իշխանյանը և «Կոնտրա Լեգեմ փաստաբանական բյուրո» ՍՊԸ-ի նախագահ՝ Ալեքսանդր Կոչուբաևը կնքել են պայմանագիր, որով սահմանված հոնորարի չափը կազմել է 1.200.000 ՀՀ դրամ: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և «Կոնտրա Լեգեմ փաստաբանական բյուրո» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի պատճենով:*

2. Դիմողը վճարել է Փաստաբանին ծառայությունների մատուցման պայմանագրի գումարը: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, ինչպես նաև Դիմողի 16.05.2023թ. և Փաստաբանի 20.05.2023թ. գրություններով:*

3. Պայմանագրի 1.2. ենթակետի համաձայն՝ կողմերի համաձայնությամբ, կատարողը պատվիրատուին մատուցում է հետևյալ ծառայությունները՝ կատարողին պաշտպանել վաշխառության վերաբերյալ քննվող քրեական գործով **<u>նախաքննության և դատաքննության փուլերում:</u>** *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և «Կոնտրա Լեգեմ փաստաբանական բյուրո» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի պատճենով:*

4. Կողմերի միջև կնքված Պայմանագրի շրջանակներում, որպես կատարող նշված է «Կոնտրա Լեգեմ փաստաբանական բյուրո» ՍՊԸ-ն ի դեմս նախագահ՝ Ալեքսանդր Կոչուբաևի: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և «Կոնտրա Լեգեմ փաստաբանական բյուրո» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի պատճենով:*

5. Պայմանագրի 7.2. ենթակետի համաձայն՝ սույն պայմանագիրը դադարում է Պայմանագրի 1.2. ենթակետում սահմանված ծառայությունները մատուցելուց հետո կամ լուծմամբ: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և «Կոնտրա Լեգեմ փաստաբանական բյուրո» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի պատճենով:*

6. 16.05.2023թ. Դիմողը դիմում է հասցեագրել «Կոնտրա Լեգեմ փաստաբանական բյուրո» ՍՊԸ-ի նախագահ՝ Ալեքսանդր Կոչուբաևին և խնդրել իրենց միջև կնքված Պայմանագիրը լուծել համաձայն Պայմանագրի 2.4.3. կետի: *Նշվածը փաստը հաստատվում է Դիմողի 16.05.2023թ. գրությամբ:*

7. Թիվ 14174322 քրեական գործով վարույթը կարճվել է 23.05.2023թ.: *Նշված փաստը հաստատվում է թիվ 14174322 քրեական գործով քննիչի 23.05.2023թ. որոշմամբ:*

8. Թիվ 14174322 քրեական գործով վարույթը նախաքննության փուլում 23.05.2023թ. կարճված լինելու պայմաններում, Փաստաբանը փաստացի չի իրականացրել Դիմողի շահերի պաշտպանությունը դատաքննության փուլում, ինչով պայմանավորված ինչպես պայմանագրի 2.1.7, 2.4.3, 2.4.3.1 և 2.4.4 կետերի, այնպես էլ Կանոնագրքի 3.8.4 (1) ենթակետի կարգավորումներին համապատասխան ցանկացած դեպքում պետք է լուծվեր Փաստաբանի և Դիմողի միջև վերջնահաշվարկի հարցը՝ կատարվեր վճարում փաստացի կատարված աշխատանքի համար կամ վերադարձվեր վճարված գումարը այն աշխատանքի դիմաց, որը փաստացի չի կատարվել: *Նշված փաստը հաստատվում է պայմանագրի պատճենով, Դիմողի 16.05.2022թ. գրությամբ, թիվ 14174322 քրեական գործով քննիչի 23.05.2023թ. որոշմամբ:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Ալեքսանդր Կոչուբաևը փաստաբան է հանդիսանում 24.05.2019 թվականից, և 2019-2023թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ (մինչ այդ նշանակված կարգապահական տույժերը համարվում են մարված):

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Ալեքսանդր Կոչուբաևը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.8.4 (1) ենթակետերի խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

7.1. Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 3.8.4 (1) ենթակետի համաձայն՝ *պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝ վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:*

Վկայակոչված կանոնների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ վստահորդի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունից բացի վստահորդի փաստաբանի համար սահմանվում են նաև այլ պարտականություններ, որոնք ենթակա են կատարման ինչպես հանձնարարության կատարման ընթացքում, այնպես էլ դրա ավարտին՝ մասնավորապես, փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում որոշակիություն և կանխատեսելիության համատեքստում՝ որպես իրավական երաշխիք՝ ի թիվս այլնի, նախատեսում է, որ պայմանագիրը լուծելուց հետո վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը, ինչպես նաև պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի չի կատարվել աշխատանք:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների հետազոտումը վկայում է այն մասին, որ 14.03.2022թ. կնքված պայմանագրով Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը՝ վաշխառության վերաբերյալ քննվող թիվ 14174322 քրեական գործով նախաքննության և դատաքննության փուլերում, ինչի կապակցությամբ Դիմողն իր հերթին վճարել է ծառայությունների մատուցման պայմանագրի գումարը:

Հետագայում Դիմողը, դժգոհ լինելով մատուցված ծառայություններից՝ մասնավորապես, Դիմողին ծառայությունների ընթացքի մասին չտեղեկացնելու մասով, 16.05.2023թ. գրությամբ լուծել է պայմանագիրը և պահանջել վերադարձնել վճարված գումարի մեծ մասը, ինչին ի պատասխան Փաստաբանը ներկայացրել է 20.05.2023թ.

գրությունը, իր հերթին լուծելով պայմանագիրը և հրաժարվելով վերադարձնել վճարված գումարը:

Փաստաբանի և վստահորդի կողմից Պայմանագիրը լուծված լինելու, ինչպես նաև թիվ 14174322 քրեական գործով վարույթը նախաքննության փուլում 23.05.2023թ. կարճված լինելու պայմաններում, Փաստաբանը փաստացի չի իրականացրել Դիմողի շահերի պաշտպանությունը դատաքննության փուլում, ինչով պայմանավորված պետք է վերադարձներ վճարված գումարը այն աշխատանքի դիմաց, որը փաստացի չի կատարել:

14.12.2023թ. կարգապահական նիստի ընթացքում Փաստաբանը նշել է, որ երկու հարյուր հազարը ՀՀ դրամը չվերադարձնելու պայմանը եղել է այն, որ քաղաքացիական գործով մասնակցել է մեկ նիստի, որը վերաբերել է քաղաքացիական գործի կասեցմանը, ինչը ներառվել է կողմերի միջև կնքված պայմանագրի մեջ:

Վերոգրյալից ակնհայտ է, որ Փաստաբանը ևս ընդունում է, որ փաստացի չի իրականացրել Դիմողի շահերի պաշտպանությունը դատաքննության փուլում, ինչով պայմանավորված պարտականություն է ունեցել վերադարձնել որոշակի գումար, ինչը չի կատարել:

Հանձնաժողովը արձանագրում է, որ կարգապահական վարույթի ընթացքում Փաստաբանը չի ներկայացրել որևէ ապացույց՝ կողմերի միջև լրացուցիչ համաձայնություն ձեռք բերելու վերաբերյալ, որը կբացառեր Կանոնագրքի 3.8.4 (1) ենթակետի խախտման փաստը:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ 24.07.2023թ. Փաստաբանը ՀՀ փաստաբանների պալատի նախագահին ներկայացված գրության մեջ նշել է. *«Ինչ վերաբերում է մեկ անգամ քաղաքացիական գործով դատական նիստին իմ կողմից ներկա գտնվելուն, ապա դա արվել է ելնելով Ա. Իշխանյանի հանդեպ ունեցած հարգանքից, որպեսզի նա դատարան չներկայանա առանց ներկայացուցչի»:*

Այս համատեքստում Փաստաբանի կողմից 14.12.2023թ. կարգապահական նիստի ընթացքում հայտնած այն տեղեկությունները, ըստ որի երկու հարյուր հազար ՀՀ դրամը չվերադարձնելու պայմանը եղել է այն, որ քաղաքացիական գործով փաստաբանը մասնակցել է մեկ նիստի, որը վերաբերել է քաղաքացիական գործի կասեցմանը, ինչը ներառված է եղել կողմերի միջև կնքված պայմանագրի մեջ՝ չի կարող դիտարկվել նաև արժանահավատ:

Ինչ վերաբերում է Փաստաբանի պնդմանն առ այն, որ կողմերի միջև Պայմանագիրը լուծված է համարում ոչ թե Պայմանագրի 2.4.3. կետի հիմքով, այլ Պայմանագրի 2.4.4. կետով, հարկ է նշել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 777-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով կատարողը պարտավորվում է պատվիրատուի առաջադրանքով ծառայություններ մատուցել (կատարել որոշակի գործողություններ կամ իրականացնել որոշակի գործունեություն), իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:*

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կնքվում է գրավոր, իսկ 3-րդ կետի համաձայն՝ սույն գլխի կանոնները կիրառվում են կապի, բժշկական, անասնաբուժական, աուդիտորական, խորհրդատվական,*

տեղեկատվական, ուսուցման, զբոսաշրջիկության և այլ ծառայությունների պայմանագրերի նկատմամբ:

Նույն օրենսգրքի 779-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *պատվիրատուն պարտավոր է իրեն մատուցված ծառայությունների համար վճարել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում նշված ժամկետներում և կարգով:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կատարելուց՝ կատարողի փաստացի կատարած ծախսերը վճարելու պայմանով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ կատարողն իրավունք ունի հրաժարվել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կատարելուց՝ պատվիրատուի վնասները լրիվ հատուցելու պայմանով:*

Կանոնագրքի 3.8.4 (1) ենթակետի համաձայն՝ *պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝ վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:*

Վերը նշված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ պարտավորական իրավահարաբերությունների ծագման հիմք է նաև ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը, որը, լինելով երկկողմանի գործարք, սահմանում է կատարողի պարտականությունը մատուցելու պատվիրատուի առաջադրանքով որոշակի ծառայություններ, և պատվիրատուի հիմնական պարտականությունը, այն է՝ վճարել իրեն մատուցված ծառայությունների համար՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում նշված ժամկետներում և կարգով: Միևնույն ժամանակ, թե ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, թե Կանոնագիրքը սահմանել են, որ Պայմանագիրը Պատվիրատուի կողմից լուծելու դեպքում վերջինս պարտավոր է վճարել Կատարողի փաստացի կատարած աշխատանքի դիմաց:

Սույն գործով կողմերը Պայմանագրի 2.4.4. կետի ուժով նույնպես սահմանել են, որ Պայմանագրի լուծման դեպքում Պատվիրատուն վճարում է կատարողի կողմից փաստացի կատարած աշխատանքի դիմաց: Հետևաբար, կողմերի միջև կնքված Պայմանագրի պայմանները նույնական են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և Կանոնագրքի կարգավորումներին:

Տվյալ դեպքում, Կատարողը Պայմանագրի 1.2. ենթակետի ուժով պարտավոր էր Պատվիրատուին Պաշտպանել վաշխառության վերաբերյալ քննվող քրեական գործով **նախաքննության և դատաքննության փուլերում,** սակայն թիվ 14174322 քրեական գործով վարույթը նախաքննության փուլում 23.05.2023թ. կարճված լինելու պայմաններում, Փաստաբանը փաստացի չի իրականացրել Դիմողի շահերի պաշտպանությունը դատաքննության փուլում, հետևաբար ունեցել է պարտականություն վերադարձնել վճարված գումարի այն մասը, որը դիմաց փաստացի աշխատանք չի կատարել:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Փաստաբանի կողմից վկայակոչած փաստարկը որևէ կերպ չէր կարող ազդեցություն ունենալ սույն կարգապահական գործով կայացված որոշման վրա, քանի որ իր կողմից նշված հիմքով Պայմանագիրը լուծված լինելու

պայմաններում ևս պետք է վերադարձներ հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չէր կատարել:

Նման պայմաններում, Հանձնաժողովը՝ գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրությունները և ապացույցները իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա են նաև Կանոնագրքի 3.8.4 (1) ենթակետի պահանջների խախտման հատկանիշները:

8.<u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ այն հանգամանքը, որ Փաստաբանը 2019-2023թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ, իսկ մինչ այդ նշանակված կարգապահական տույժերը համարվում են մարված, Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործով Փաստաբանին նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ անհրաժեշտ է կիրառել «նկատողություն» տույժի տեսակը: Միաժամանակ, հետագայում նմանատիպ իրավիճակները կանխարգելելու նպատակով Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Փաստաբանի նկատմամբ որպես լրացուցիչ տույժ կիրառել «վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի պահանջներով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Ալեքսանդր Սերգեյի Կոչուբակի (արտոնագիր՝ թիվ 2606) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն «Դեոնթոլոգիա» թեմայով, 4 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.8.4 (1) ենթակետի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-23028-2-Ա
14 դեկտեմբերի 2023թ.
ք.Երևան